III

ՀԵԹՈՒՄ Պ.ՏՄԻՉԻ ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (XIII Դ.)

Մատենադարանի № 1898 ձեռագրում «Պատմութիւն՝ խրոնիկոնին» հետևում են երեք մանր բնագրեր.

Ա. Պատմութիւն ազգին Ռուբինանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիո (էջ 168ա—172ա)[1];

Բ և Գ. Ազգաբանութիւն թագաւորացն Երուսաղէմի և թագաւորացն Կիպրոսի (էջ 172ա—174բ);

Դ. Ազգաբանութիւն բրընձնոյն Անտիոքա (էջ 174բ—175բ)[2];

Ա. Բնագիրն սկսվում է Կիլիկիայում հայկական իշխանության հիմնադիր Ռուբենի հանգես գալուց և վերջանում Հեթում Բ-ի թագավորությամբ, ավելի ճիշտ, հեղինակն ազգաբանական այս ճյուղագրությունը կազմել է 1293 թվին, որովհետև նա գիտե Հեթում Բ-ի ավագ քրոջ՝ Զապելի ամուսնությունը, որը տեղի է ունեցել 1293 թվին[3], մյուս քրոջ՝ Ռիթույի ամուսնության, որը տեղի է ունեցել 1294 թ.[4], ինչպես այդ, այնպես էլ հաջորդ տարիների դեպքերի մասին չի խոսում։

Երկրորդ բնագրի առաջին մասը (Բ) վերաբերում է Երուսաղեմի լատինական պետության թագավորներին, սկսելով խաչակիրների կողմից 1099 թ. Երուսաղեմի գրավմամբ և ավարտելով XIII դարի առաջին կեսին վերաբերող տեղեկություններով։ Երկրորդ մասը (Գ) սկսվում է Կիպրոսի իշխանության հիմնադրման վկայությամբ (մոտավորապես XII դարի 90-ական թվականներին) և վերջանում Լևոն Բ թագավորի թոռան, Թորոսի որդու՝ Լևոնի ծննդյան վկայությամբ (վերջինս ծնվել է 1289 թվին)[5] հիշատակելով նաև Հենրիխ II-ի թագավորության և 1293 թ. մի դեպքի մասին։

Վերջապես Դ բնագիրը սկսվում է Անտիոքի իշխանության հաստատման (XI դարի 90-ական թվականների վերջին) և վերջանում XII դարի 50-ական թվականների վկայությամբ։

Թե ով է եղել այս բնագրերի հեղինակը, որոշակի ցուցում չունենք, բայց փաստերի ուշադիր քննությունը այդ հարցը պարզելու համար միանգամայն բավարար հնարավորություններ է տալիս։

---

[1] Տես Ս. Անեցու ժամանակագրության հավելվածը, էջ 204—212։

[2] Վերջին երկու բնագիրը տես „Zeitschrift für armenische philologie", 1901, 1er Heft. էջ 177—185։

[3] Մ.ժ., 1, էջ 86։

[4] Մ.ժ., 1, էջ 87։

[5] Մ.ժ., 1, էջ 86։

Վերջին բնագրում (Դ) Անտիոքի իշխանների ազգաբանությունը թվելիս, հեղինակը Ռայմոնդ III-ի մասին գրում է. «Այս Ռեմունտս էառ կին զԱլիծ դուստր Ռովբէն Լէոնցոյն, որպէս վերոյ յիշեցաք» (էջ 109)[1]։ Եվ իսկապես, մատնացույց արված տեղեկությունը, առավել ընդարձակ ձևով գտնում ենք առաջին, Ռուբինյանց ազգի պատմության, բնագրում, որտեղ կարդում ենք. «Իսկ զերկոսին դստերսն Ռովբէնի եղբաւր իւրոյ (Լևոն Ա թագավոր) կարգեաց այսպէս՝ զԱլիծն ետ յամուսնութիւն Ռեմունտ բրընձին Անտիոքայ, յորմէ ծնաւ որդի մի Ռովբէն անուն, ...»(էջ 103, ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Այսպիսով, ինչպես հիմա է պարզվում, վերևում նշված երեք բնագրի հեղինակն էլ եղել է միևնույն անձնավորությունը։ Բայց ով։ Ալիշանը «Սիսուանդ»-ի հավելվածում գրում է. «Մինչդեռ ի տպագրել էին յետին բանք յուսոյ իմոյ, (յառաջին աւուրս ամսեան յունիսի, 1885), եհաս ի ձեռս իմ համառօտ պատմութիւն Ռուբինեանց՝ գործ Հեթմոյ տեառն Կոռիկոսի. յորում գրէ և զայս բան. «Արար պատերազմունս (խոսքը Լևոն Ա թագավորի մասին է—Վ. Հ.) մեծամեծս, որպէս գտանի ի լիապատում դիրս Պատմութեան նորա»...[2] (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Թեև Ալիշանը Հեթում Պատմիչի այդ աշխատության ստույգ խորագիրը չի բերում, այլ նշում է լոկ բնագրի բովանդակությունը, դժվար չէ հետևեցնել, որ խոսքը վերաբերում է ոչ թե «Համառօտ պատմութիւն Ռուբինեան իշխանաց»[3], այլ վերոբերեալ «Պատմութիւն ազգին Ռովբինանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիոյ» բնագրին, որովհետև Ալիշանի մեջբերած խոսքերը գտնում ենք վերջինիս մեջ (էջ 103)։

Ինչպես տեսնում ենք, Ա բնագիրը Ալիշանը իրավամբ վերագրել է Կոռիկոսի իշխան Հեթում Պատմիչին, թեև հայտնի չէ, թե այդ ենթադրության համար ինչն է նրան հիմք ծառայել, բայց կնշենք այդ եզրակացությունը հաստատող փաստերը՝ նախ Կիպրոսի թագավորների բաժնում հեղինակը գրում է. «Կի եղև թագաւոր Երուսաղէմի ընդ իւր կնոջն դեռաց Սպիլին, որպէս ի վերոյ յիշեցաք» (էջ 107)։ Այս ակնարկությամբ կարծում ենք հեղինակը նկատի ունի ոչ թե Երուսաղեմի թագավորների բաժնի «եկաց Ը-երրորդ թագաւոր Երուսաղէմի Կի տ՝ Լըզինայն այրն վերոասացեալ Սպլին» հատվածը, այլ Հեթում Պատմիչի Պատմութիւն խրոնիկոնին՝ «1186 մեռաւ թագաւորն Երուսաղէմի Պաղտին Փոքրն և եկաց ի թագաւորութիւնն Ը-երրորդ մայր նորա Սպիլ թագուհին և իր հայրգիրն Կի ասը Լըզինայն» (էջ 59) հատվածը, որովհետև վերևում բերված և այս հատվածների ընդգծված մասերը ավելի մոտ են իրար։ Երկրորդ, Ռուբինյանց իշխանների և թագավորների պատմությունը վերջանում է Հեթում Բ-ի թագավորության շրջանով, ասել է թե իր, Հեթում Պատմիչի ժամանակաշրջանով։ Երրորդ՝ քննության ենթակա բնագրերում և «Պատմութիւն խրոնիկոնին»-ի մեջ առկա են անձնանունների (օրինակ՝ Գաւնդաւիքէ, Պաղտին, Մելիսանթ, Ֆուք, Ամառի և այլն) և ոճական (օրինակ, եկաց երկրորդ թագաւոր, դուսք և այլն) նույնություն։

Այսպիսով, Հեթում Պատմիչը հանդես է գալիս վերևում նշված երեք բնագրերի հեղինակ, որը սերվում էր Հեթումյանների դինաստիայից։ Նա

---

[1] Տես այս հատորի էջերը։

[2] էջ 549։

[3] Այս մասին աես ներքևում, էջ 97—99։

արքայահոր՝ Կոստանդին պայլի թոռն էր։ Ազգակցական այս կապերն ապահովեցին Հեթում Պատմիչի քաղաքական դիրքը ե նրա գործունեությունն ընդհանրապես։ Սակայն նա պետական և քաղաքական գործիչ լինելուց բացի իր ժամանակի՝ XIII դարի ոչ անհայտ մատենագիրներից էր։ Հեթում Պատմիչի գրչին պատկանում են մի քանի աշխատություններ՝ «Պատմութիւն Թաթարաց»-ը[1] և ազգաբանական այս գործերը, իսկ ֆրանսերեն աղբյուրներից քաղելով կազմեց համեմատաբար մի ընդարձակ ժամանակագրություն՝ «Պատմութիւն խրոնիկոնին» խորագրով[2]։ Ինչպես վերջինիս նյութի ընտրության վաստը, այնպես էլ ազգաբանական այս աշխատությունները հնարավորություն են տալիս մեզ պարզելու հեղինակի պատմագիտական հայացքները։ Նա կարևոր է համարել շարադրել թագավորական կամ ֆեոդալական առանձին տների ազգաբանությունը, որովհետև, ինչպես կարծում է նա, պատմության կերտողները հանդիսանում են թագավորները և իշխանները։ Հասկանալի է որ նման, թեկուզ ստուգապատում աշխատությունները երկրի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքը ճանաչելու համար շատ չնչին կարևորություն ունեն։

Առաջարկվող երեք բնագրերը պետք է դիտել որպես արդյունք տևական այն հարաբերությունների, որ Կիլիկիայի Հայկական պետականության ներկայացուցիչները ունեցան խաչակիրների հետ, հենց սկզբից շփման մեջ մտնելով և օգնելով նրանց[3] և ապա նրանց հիմնադրած պետություններին, իսկ ավելի ուշ նրանց հետ ունենալով նաև խնամիական կապեր։

Վերևում նշված վերջին երկու բնագրի աղբյուրների մասին որոշակի բան ասելը դժվար է, թեև հավանական է ենթադրել, որ Հեթում Պատմիչն անշուշտ օգտագործել է 1296 թվին կազմած «Պատմութիւն խրոնիկոն»-ը, գուցե և այլ աշխատություններ ևս, ու կազմել Երուսաղեմի, Կիպրոսի և Անտիոքի թագավորների ու իշխանների ազգաբանությունը։

Կիլիկիայի հայկական իշխանների ու թագավորների պատմության համար Հեթում Պատմիչը, ամենայն հավանականությամբ, ծանոթ է եղել և մասամբ օգտագործել Վ. Բաբունու ոտանավոր պատմությունը, որը երևում է թեկուզ մի երկու համեմատությամբ՝

Հեթում Պատմիչ	Վահրամ Բաբունի
1. էջ 101 «...յաւուր միում գէպ եղև կայսերն գնալ ի բաղանիս եմոյծ ընդ իւր իբր զմաւտակա և զպասաւոր զՌովբէն որդին Լևոնի, իսկ Ռովբէն, վասն սաստիկ ուժեղութեանն իւրոյ մատուցեալ կալաւ զգուռն մի, որ էր լի ջրով, վերոյց ի սեղոջէ իւրմէ և տարեալ եդ առաջի կայսերն, ընդ որ զարմացաւ կայսրն և ամենայն տեսողքն»։	1. էջ 109. «Որ և յաւուր՝ միում մտեալ, Ի բաղանիսն՝ լոգացեալ. Եւ զԼէոն՝ անդէն կոչեալ, Իւրով որդւովքն՝ և մեծարեալ։ Ցորում Ռուբէնն՝ արիացեալ, Եւ հրաշալի՝ գործքս ցուցեալ. Զի արքայի՝ սպասաւորեալ, Եւ մեծարել՝ զնա կամեցեալ։

---

1 Վենետիկ, 1842 թ.։ Այս հրատարակության մեջ է մտել մի ժամանակագրություն Հեթում Պատմիչի անունով, սակայն, ինչպես արդեն ցույց ենք տվել, այդ ժամանակագրության հեղինակը Հեթում Բ-ն է (Մծ, 1, էջ 69—70)։

2 Տես վերևում, էջ 37—80։

3 Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, էջ 90—93։

4 Տես ներկա հրատարակության էջերը։

Նա զաւաղան՝ մի ջրով լցեալ,
Եւ ամբաղոյն՝ անդէն պնդեալ.
Զայն քաջապէս՝ ի վեր առեալ,
Եւ առաջի՝ կայսերն եղեալ
Ընդ որ տեսօղքն՝ զարմացեալ։[1]

2. էջ 101։ «Եւ յետ փոքր ինչ ժամանակի, դէպ եղև, կայսերն զալ ի յաշխարհն Դիլիկեցոց բազում զաւրաւք։ Եւ մինչ բանակեալ էայր ի դաշտին Անարզարոյ յաւուր միոջ կամեցաւ յորս ելանել և յորսալն եհտն նետ մի ի կապաբճուցն դեղուն, զի ձգեսցէ զհետ երէոյ և խկոյն խոցեալ ի նետէն իւրմէ վախճանեցաւ, զոր հանեալ զփորոտի նորա թաղեցին մերձ յԱնաւարզա ի տեղի մի և շինեցին եկեղեցի ի վերայ, որ մինչև յայսաւր կոչի անուն տեղոյն Բաղրդիկ»։

2. էջ 201. «Զկնի ամաց՝ ինչ հոլովեալ,
Կայսր զօրօք՝ բազմօք շարժեալ.
Ի յօդնութիւն՝ բրինձին դիմեալ,
Որ ի Տաճկաց՝ էր յոյժ նեղեալ։
Պերիեռուժէն՝ արքայն եկեալ,
ՅԱնարզարա՝ բանակ առեալ.
Անդ ի դրաղում՝ որսոց ելեալ,
Ցիւրոցն դեղեալ՝ նետէ խոցեալ.
Եւ ի տեղւոջէն՝ վախճանեալ,
. . . . . .
Զփորոտիսն՝ արդէն թաղեալ,
Եւ ի վերայ՝ շինուած կազմեալ.
Որ մինչև ցայսօր՝ անուանեալ,
Եւ Բաղրդիկ՝ տեղին կոչեալ։

Բացի սրանից Հեթում Պատմիչն օգտագործած կլիներ նաև այլ աշխատութիւններ և ընտանեկան զրույցներ։

Հեթում Պատմիչի «Պատմութիւն ազգին Ռուբինանց...» աշխատութիւնից բացի, նման մի պատմութիւն գտնվում է նաև Մատենադարանի № 979 Ճաշոցի 471ա—477ա էջերում։ Պատմա-ազգաբանական այս բնագիրն առանձին գործ չէ, այլ կազմում է 1286 թ. գրված այդ նշանավոր ձեռագրի հիշատակարանի[2] հիմնական բովանդակությունը։ Հիշատակարանի հենց սկզբից իմանում ենք, որ Ճաշոցը ընդօրինակվել է Հեթում թագաժառանգի (ապագա Հեթում Բ) պատվերով։ Ազգաբանությանը նախորդող հետևյալ հատվածը՝ «Զայս խրախճանութիւն հոգևոր և անմահական փարթամութիւնս ստացաւ նախայիշատակեալ բարեսէր պարոնս մեր Հեթում, որ է շառաւեղ բարեշնորհ բղխեալ յարմատոյ թագաւորութեան Թորգոմեան սեռի և Աստանդանս տոհմի, որ յայտնարանեալ լինի զայս ձև աւրինակին» (էջ 471ա և բ) մեզ ենթադրել է տալիս, որ գրիչը ցանկացել է իր պատվիրատուի՝ Հեթում արքայազնի ազգաբանությունը և նրանց համառոտ պատմությունը ևս գրել։

Այս բնագրի տեղեկությունները զարմանալի կերպով համընկնում են Վահրամ Բաբունու ոտանավոր պատմության վկայություններին։ Կարծում ենք, որ այս հիշատակարանը նույնությամբ երկրորդված է Վ. Բաբունու չափածո պատմությունից[3]։

---

[1] Տես «Վահրամայ Բաբունւոյ ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց», Փարիզ, 1859։

[2] Հիշատակարանը հրատարակվել է նախ «Արարատ», 1870, էջ 353—300, 382—380, ապա Ս. Անեցու ժամանակագրության հավելվածում՝ էջ 212—223, «Համառօտ պատմութիւն Ռուբինեան իշխանաց» խորագրով։

[3] Այդ ցույց կտանք երկու բնագրից համապատասխան հատվածները դեմ առ դեմ դնելով.

Հիշատակարան	Վ. Բաբունի
1. էջ 473ա «...Ոչ տեսի յանուրջս, զի այր ոմն տայր յիս նկանակ մի հացի և ձուկն ի վերայ...»	1. էջ 200 «Տեսի ասէ՝ յանուրջս եկեալ, Այր մի աստէն՝ փառազարդեալ. Ինձ նկանակ՝ հացի տուեալ, Ցորոյ վերայ՝ ձուկն էր եղեալ։»

Այդ պատճառով, ինչպես վերոհիշյալ, այնպես էլ մի այլ հիշատակա-

---

2. էջ 473ա «...դորոյ (Թորոսի) զյեղանակ գալստեանն ի Կոստանդինուպաւլսէ և զաբելոյն Կիլիկեա, այլ և այլ աւրինակաւ պատմեն գիրք»,

3. էջ 474ա «Զի էր այր բարեպաշտ և ողորմած, մեծախորհուրդ և առատամիտ, վարժեալ հին և նոր աւրինաւք Աստուծոյ, աեղեակ գոլով և ամենայն իմաստասիրական արհեստից. զորմէ ասեն հոգի մարգարէութեան ունել, որ և զրագում գժուարալոյծ բանս մեկնեալ, որ գտանի այժմ առ մեզ»։

4. էջ 475ա «Եւ ելից խաղաղութեամբ զաշխարհ և բարութեամբ իրրև զդրախտ պաղաւեսեալ։ Ամուսնացոյց զդուստր եղբաւր իւրոյ յԱնտիոք. և ապա առեալ զԱնտիոք ետ նմա և որդւոյ իւրոյ այնմ, որ բրինձ Ռուբէն կոչեցաւ Եառ զԱրասուս և զԳաղբաս, տիրեաց և Լամբրունին»։

2. էջ 201 «Եւ առ Քրիստոս՝ վերակոչեալ.
Ցայնժամ և կայսրքն՝ զթացեալ,
Եւ ի բանտէ՝ զԹորոս հանեալ.
. . . . . .
Զոր է յոլովք՝ են պատմագրեալ».

3. էջ 209. «Բարեաց գործովք՝ բարգաւաճեալ,
Եւ հաւատով՝ պայծառացեալ.
Աստուածային՝ գրովք վարժեալ,
Եւ յիմաստից՝ արուեստ մտեալ։
Ասեն հոգի՝ սա ընկալեալ,
Մարգարէի՝ հաւասարեալ,
Որով գժուար՝ բանս լուծեալ.
Որ գտանի՝ այժմս գրեալ»։

4. էջ 215 «Խաղաղութեամբ՝ զաշխարհ լցեալ,
Իրրև զդրախտ՝ պտղաւետեալ։
Զմեծն Անտիոք՝ յինքն գրաւեալ,
Եղբօր դստերն՝ իւրոյ տուեալ.
Այն որ զՌուբէն՝ եղև ծնեալ,
Որ և բրինձն՝ կոչեցեալ։
ԶզԱրասուս՝ գաւառն առեալ,
Եւ Գաղբսայ՝ գզեկին տիրեալ.
Իմաստութեամբ՝ հնարաւորեալ,
Եւ զԼամբրոն՝ յինքն կալեալ»։

Ամբողջ նյութի ընթացքից կարելի է բերել այսպիսի բազմաթիվ հատվածներ ու օրինակներ։ Հիշատակարանում ընդգրկած նյութն իր ծավալի տեսակետից ծածկում է Վ. Բաբունու ոտանավոր պատմությանը, կարծեք վերջինիս վրա ձևած լինի առաջինը, երկուսն էլ սկսվում են Գաղիկ Բ-ի պանդխտությամբ և վերջանում Լևոն Բ Թագավորի շրջանով՝ երբ վերջինս դեռ կենդանի էր։ Շատ նման է նաև բառապաշարը։ Երկու բնագրերի այս նմանությունը ժամանակին նկատել էր հիշատակարանի հրատարակիչը («Արարատ», 1870, էջ 383, ծանոթ. 20) և այդ փաստը նրան մղել է զանազան խորհրդածությունների՝ մերթ նուլնացնելով հեղինակներին, մերթ նրանց համարելով ընկերներ և այլն։ Երկու բնագրերի աղերսի հարցը լուծելու համար կարևոր նշանակություն ունի այն խնդիրը, թե Վ. Բաբունին Երբ է շարադրել և ավարտել իր ոտանավոր պատմությունը (ինչպես արդեն գիտենք Ճաշոցի հիշատակարանը գրվել է 1286 թվին), որի մասին, գրժբախտաբար, որոշակի վկայություն չունենք, թեև կարելի է հաստատ նշել մոտավոր տարիները։ Վ. Բաբունին իր պատմության վերջին էջերից մեկում, ըստ ավագության, հիշում է Լևոն Բ Թագավորի երեք որդիներին միայն՝ Հեթումին, Թորոսին և Սմբատին (էջ 236)։ Վերջինս ծնվել է 1276 թվին (Մծ, 1, էջ 84)։ Դրանից անմիջապես հետո նա նկարագրում է եգիպտացիների արշավանքը, որը դարձյալ վերաբերում է 1276 թ.։ Վ. Բաբունին չգիտե ոչ միայն Լևոն Բ Թագավորի կնոջ՝ Կիռաննայի մահը (էջ 236), որը տեղի է ունեցել 1285 թ. օգոստոսին, այլև Լևոն Բ-ի մյուս որդիների ծնունդը՝ Կոստանդինի՝ 1277 թ. (Մծ, 1, էջ 84), Ներսեսի՝ 1270 թ. (Մծ, 1, էջ 84) և այլն։ Այս հանգամանքը մեզ ենթադրել է տալիս, որ Վ. Բաբունին իր ոտանավոր պատմությունը շարադրել է 1276—1277 թթ., այսինքն Ճաշոցի ընդօրինակությունից մոտավորապես 10 տարի առաջ։ Հետևաբար, սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Ճաշոցի հիշատակարանի տեղեկությունները վերցված են Վ. Բաբունու ոտանավոր պատմությունից։

քանում[1] գտնվող Ռուբինյանների զուտ ազգաբանությունը, որը խիստ համառոտ է և նոր բան չասող, չզետեղեցինք սույն հատորում։

«Պատմութիւն ազգին Ռուբինանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիոյ» ձեռագրի մի տարբերակը գտնվում է Մատենադարանի № 3965 ձեռագրի 88ա—91ա էջերում, որի տարբերթերցվածքները նշեցինք տողատակում։

[1] № 912, էջ 99ա—102ա, հրատարակված է նախապես «Արարատ»-ում, 1878 թ., էջ 95—100, ապա Ս. Անեցու ժամանակագրության հավելվածում, էջ 234—248։

III

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՆ ՌՈՎԲԻՆԱՆՑ, ԹԷ ՈՐՊԷՍ ՏԻՐԵՑԻՆ ԿԻԼԻԿԻՈ[1] 168 —

Ա. Ռովբէն մեծն ազգական ոմն և իշխան թագաւորին Հայոց Գագկայ։ Յետ մահուանն Գագկա թագաւորին եկեալ յերկիրն Կաւսիտառոյ անդ բնակեցաւ և անտի եկեալ ի դեղն Կաւրմաւզաւլաւ ե կացեալ անդ մինչև ի վախճան իւր, թողեալ որդի իւր զԿոստանդին։

Բ. Յետ մահուան Ռովբինի, Կոստանդին որդի նորա եմուտ ի նահանգս Կիլիկեցոց և տիրեաց Վահկային և այնմ լեռնակողմանցն և ապա վախճանեալ թաղեցաւ ի Կաստաղաւնն, թողեալ Բ (2) որդիս՝ զԹորոս և զՀեթում[2]։

Գ. Թորոս որդի Կոստանդեա յետ մահուան հաւրն իւրոյ կալաւ զիշխանութիւն նորա։ Սա վրէժխնդիր եղեալ մահուանն Գագկայ, յորդոցն Մանտալէի և էառ զամրոցս նոցա զկոչեցեալն Կենդռաւսկաւի և զնոսա մահացոյց չարաչար մահուամբ[3]։ Յետ որոյ զաւրացեալ ի վերայ ազգին Յունաց, տիրեաց բազում դաւառաց, էառ և զԱնարզաբա և զՇինեաց անդ տաճար և կացոյց ի տաճարին զպատկեր սրբոյ Աստուածածնին, զոր բերեալ էր ի Կենդռաւսկաւոյ։ Այս Թորոս շինեաց զաստուածաբնակ ուխտսն զԹրազարկն և զՄաշկևորն և ապա վախճանեալ թաղեցաւ ի Թրազարկն[4]։ Մնացեալ իւր որդի մի Կոստանդին անուն, զոր ամպարիշտք ոմանք կալեալ մահացու դեղաւք մեռուցին զնա։

Դ. Լևոն որդի Կոստանդեա և եղբայր վերոյասացեալ Թորոսին || յետ մահուան եղբաւր իւրոյ Թորոսի էառ զիշխանութիւն նորա. և այնչափ զաւրացեալ մինչև տիրեաց մայրաքաղաքացն Կիլիկիոյ Մասայ և Տարսոնի։ Սորա եղեն որդիք Դ (4)՝ Թորոս, Ստեփանէ, Մլեհ և Ռովբէն։ Իսկ կայսն Յունաց Պաւրֆիրաւէնն Կալաւժան եկն յաշխարհն Կիլիկիոյ և կալաւ զՀեթում և զերկուս որդիսն իւր՝ զԹորոս և զՌովբէն. և տարեալ զնոսա կապանաւք ի Կոստանդինուպաւլիս[5]։ Իսկ Ստեփանէ և Մլեհն զերծեալք գնացին յՈւռհա առ քեռին իւրեանց։ Եւ յետ ամաց ինչ 168 բ.

1 Կիլիկիոյ։ 3 Գակկայ։ 4 Կոռիտառոյ, Կորմոզաւլաւ։ 5 որդին։ 6 Կոստանդին։ 8 նահանգս։ 9 վաղճանեալ, Կաստաղաւնն։ 10 երկու փխ. Բ։ 11 հաւրն։ 13 յորդւոցն։ 14 Կենդռաւսկաւի։ 15 զօրացեալ։ 16 զԱնարզաբայ։ 18 Կենդռաւսկաւոյ։ 19 վաղճանեալ։ 21 դեղաւք։ 22 որդին։ 23 եղբաւր։ 24 զօրացեալ։ 25 Դ չիք։ 26 Ստեփանէ, Պաւրֆիրաւէնն։ 27 Կալաւժանն։ 29 կապանաւք, Կ. Պալիս, Ստեփաննէ։ 30 յՈւռհայ։

կայսրն քաղցրացեալ նոցա էհան ի բանտէն զԼևոն որդովքն. և
էին պատուով ի պաղատն արքունի. մինչ յաւուր միում դէպ
եղև կայսերն գնալ ի բաղանիս եմոյծ ընդ իւր իբր զմաւտակա և
զսպասաւոր զՌովրէն որդին Լևոնի. իսկ Ռովրէն վասն սաստիկ
5 ուժեղութեանն իւրոյ մատուցեալ կալաւ զդուռն մի, որ էր լի
ջրով, վերոյց ի աեղոջէ իւրմէ և արեալ եղ առաջի կայսերն,
ընդ որ զարմացաւ կայսրն և ամենայն տեսողքն։ Ապա յետ
աւուրց ինչ ամբաստանեցին առ կայսրն զՌովրէն և եաուն կու-
բացուցանել զաչսն, յետ որոյ վախճանեցաւ։ Եւ դարձեալ կալան
10 զԼևոն և զԹորոս որդին իւր և եդին ի բանտի։ Եւ մինչ կային ի
բանտին տեսիլ ետես Թորոս և պատմեաց հաւրն իւրոյ՝ էթէ
«Տեսանէի յանուրջս այր մի փառազարդեալ, որ ունէր ի ձեռինն
նկանակ հացի և ձուկն մի և տայր ինձ, և դու հայր խնդրէիր ի
հացէն և ի ձկանէն, այլ ոչ կերակրէիր ի նմանէ[1]»։ Եւ Լևոն
15 խնդութեամբ մեկնէր զերազ որդոյն այսպէս՝ էթէ «Որդեակ իմ
աալոց է Աստուած զհայրենի աշխարհն մեր դարձեալ ի ձեռս քո,
բայց ես սչ ժամանեմ տեսանել զայն»։ Եւ յետ սակաւ ինչ աւուրց
եհաս վախճան Լևոնի ի բանտի անտ և փոխեցաւ առ Քրիստոս։
Իսկ կայսրն գթացեալ եհան զԹորոս ի բանտէն։ Եւ յետ փոքր ինչ
20 ժամանակի, դէպ եղև, կայսերն գալ ի յաշխարհն Կիլիկեցոց բա-
զում դաւրաւք։ Եւ մինչ բանակեալ || կայր ի դաշտին Անարզա- 102 ա
բոյ յաւուր միոջ կամեցաւ յորս ելանել. և յորսալն եհան նետ
մի ի կապարճուցն գեղուն, զի ձգեսցէ զհետ երէոյ և իսկոյն
խոցեալ ի նետէն իւրմէ վախճանեցաւ[3]. զոր հանեալ զթորոտի
25 նորա թաղեցին մերձ յԱնաւարզա ի տեղի մի և շինեցին եկեղեցի
ի վերայ, որ մինչև յայսաւր կոչի անուն տեղոյն Քաղրդիկ։ Եւ
զմարմին կայսերն տարեալ զաւրքն նորա զկնի իւրեանց ի Կոս-
տանդինուպաւլիս։ Իսկ Թորոսն որդի Լևոնի Ցաց յայնժամ ի
Կիլիկիայ և ոչ գնաց զկնի զաւրաց կայսերն, այլ գնացեալ ի
30 սահմանս Վահկային և դեաւղ մի իբրև զաւտարական ոք, ոչ յայտ-
նեալ զինքն ումեք, բայց միայն քահանայի միոյ հայոյ, զի
ծանոյց նմա, թէ որդի է Լևոնի։ Եւ էրէցն այն իմաստութեամբ
ծածկեաց զխորհուրդս նորա, զի մի Ֆնասեսցի ասէ ի Ցունաց,
վասն որոյ եդ զնա հովիւ ոչխարաց իւրոց մինչև անցին աւուրք
35 բազում. և առ սակաւ սակաւ յայտնեաց զգալն Թորոսի հաւա-
տարմաց ոմանց, որք միարանեալ հնարիւ մեծաւ առին զՎահ-
կայն ի Ցունաց։

Ե. Եւ տիրեաց Թորոս Վահկային և անտի զաւրացեալ էառ
զբազում դաւառս։ Իսկ յետ մահուան Պաւրֆիրաւէն կայսերն եկաց
40 կայսր ի Կոստանդինուպաւլիս Մանուիլ որդի նորին։ Եւ այս
Մանուիլ կայսր ժողովեաց բազում զաւրս և եկն ի Կիլիկիայ, վասն

---

1 բանդէն։ 2 պաղատն։ 3 և եմոյծ, զմաւտակա։ 9 վաղճանեցաւ։ 10 բանդի։ 11 հօրն, եթէ։ 13 հայր իմ։ 15 որդւոյն, եթէ։ 16 ձեռքս։ 18 վաղճան։ 21 զօրօք։ 24 վաղճանեցաւ։ 25 յԱնաւարզայ։ 26 ցայսօր։ 27 զօրքն։ 28 Կ. Գոլիս։ 29 զօրաց։ 30 գիւղ, զաւտարական։ 34 իւրոյ, անձին։ 38 զօրացեալ։ 39 Գօրֆիրաւէն։ 40 Կ. Գոլիս։ 41 զօրս.

գնալոյ յաւգնութիւն ազգին Ֆռանգաց[9], որ Յերուսաղէմ. և լուաւ
անտ զգործսն Թորոսի, զոր գործեալ էր ընդ Յոյնսն մախացեալ
ընդ նմա յոյժ, զաւրս արձակեաց ընդ ամենայն լեռնակողմանսն,
վասն ըմբռնելոյ զԹորոս։ Եւ Թորոս ամրացեալ կայր ի Բարձր-
5 բերդ և ժողովեալ կային առ նա բազում զաւրք հետևակաց, որք
պնտեալ ի կապանսն բազումք Ղնասեցին ի զաւրաց կայսերն և
զոմանս ի մեծամեծաց նորա կապեալ տարան առ Թորոս։ Եւ
կայսրն իբրև լուաւ զնոյն քաջութիւն Թորոսի առաքեաց առ նա
և կոչեաց զալ հաշտութեամբ || ի հնազանդութիւն նմա միջնոր- 169 բ
10 դութեամբ ըբնձին Անտիոքա։ Եւ Թորոս գնաց առաջի կայսերն
յորմէ ընկալաւ պատիւ և մեծարանք յոյժ, բայց զԱնաւարզայ
խնդրեաց ի նմանէ կայսրն և էառ. և զայլ երկիրն պարդևեաց
Թորոսի մշտընջենաւոր և ամրացոյց արքունական սիգեղիւ։ Եւ
անտի գնաց կայսրն յԱնտիոք և Թորոս զկնի նորա և յորժամ
15 դարձան յԱնտիոքա կամելով կայսերն գնալ ի Կոստանդինու-
պաւլիս Թորոս ոչ գնաց զկնի նորա, այլ խոյս ետ և գնաց ի
Վահկայն։ Եւ յետ երթալոյ կայսերն յաշխարհ իւր էջ դարձեալ
Թորոս ի Վահկայէն և էառ զԱնաւարզա և զՄսիս։ Եւ մինչ կայր
ի Մսիս դուսքն Յունաց[10], որ էր ի Տարսոն ժողովեաց զզաւրս
20 Յունացն և կոչեաց ընդ իւր զտէրն Լամբրունին[11] և դնաթա-
նիլեանք[12], որ էին տէրք Ասկուռոյ[13] և այնմ լեռնակողմանցն,
զնոսա զամենեսեան գումարեաց և եկն ի վերայ Թորոսի ի Մսիս։
Իսկ Թորոս ի գիշերի գաղտ պատառեաց զպարիսպ քաղաքին և
ելեալ պատերազմեցաւ ընդ զաւրս Յունաց և անթիւս կոտորեաց
25 ի նոցանէ, և զմնացեալսն փախստական արար. և կալաւ զԱւշին
տէրն Լամբրունին և էառ բազում գանձ ի նմանէ և ապա աղա-
տեաց զնա[14]։ Յետ որոյ փեսայացոյց զորդի նորա զՀեթում ի
դուստր իւր Ռիթա[15]։ Եւ յետ աւուրց ինչ Թորոսի առեալ զաւրս
գնաց ի վերայ Տարսոնի և էառ զնա[16], և յայնմհետէ տիրեաց
30 ամենայն Կիլիկիոյ՝ էառ և յաշխարհէն Իսավրիոյ մասն ինչ։ Իսկ
Թորոսի հասեալ վախճան թաղեցաւ ի Թրազարկն[17]։ Եւ Ստեփանէ
եղբայր իւր ոչ ժամանեաց տիրել աշխարհին Կիլիկիոյ յետ մա-
հուան եղբաւրն, քանզի յառաջագոյն կալան զնա իշխանք Յոյնք
ի սահմանս Համուսին, և յեռացեալ պղինծ եդեալ խաշեցին զնա,
35 և յետոյ տարեալ զմարմինն թաղեցին յԱրքակաղնին[18]։ Եւ Թո-
րոսի մնացեալ որդի մի Լևոն[19], զոր վստահացեալ էր Թորոս յա-
ներն իւր Թումաս, որ էր յԱնտիոքա, նոյնպէս || և յանձին 170 ա
արարեալ էր նմա զպայլութիւն աշխարհին։ Իսկ միւս եղբայրն
Թորոսի Մլեհն փախուցեալ կայր առ սուլտանն Հալպա զաւրս
40 բազումս։ Եւ յորժամ լուաւ զմահ եղբարցն եկն յաշխարհն Կի-
լիկիոյ, աւգնականութեամբ սուլտանին Հալպա[20], կամեցաւ տի-

---

1 յօգնութիւն, ֆռանկաց։ 3 զօրս։ 5 զօրք։ 6 զօրաց։ 16 բրնձին, Անդիոքա։ 13 մշտնջենաւոր։ 15 կ. Գօլիս։ 18 զԱնաւարզայ։ 19 դուքսն, զզօրս։ 20 Լամբրոնին։ 21 և չիք։ 24 զօրս։ 25 զՕշին։ 26 Լամբրոնին։ 28 Ռիթայ, զօրս։ 31 վազճան, Ստեփաննէ։ 33 եղբօրն։ 35 յԱրքայկաղնին։ 36 Լևոն անուն, էր չիք։ 37 յԱնտիոքայ։ 38 եղբայրք։ 41 օգնականութեամբ։

ըել աշխարհին և ոչ կարաց, այլ դարձաւ անդրէն ի Հալպ։ Եւ միւս անգամ դարձեալ խնդրեց ի սուլտանէն զաւրս բաղումս։ Եւ շարժեցաւ գալ ի վերայ քրիստոնէիցն աւերել զաշխարհն և աւգնականութեամբ անաւրինացն տիրել երկրին։ Այլ իշխանքն
5 Հայոց յորժամ լուան զդալն նորա առաքեցին առ նա, զի սիրով եկեալ տիրեսցէ աշխարհին և մի ինչ ջնասեսցէ քրիստոնէից զաւրքն անաւրինաց։ Եւ նա լուեալ զայն դարձոյց ըզաւրսն սուլտանին մեծաւ շնորհակալութեամբ։

Զ. Եւ Մլեհն եկեալ տիրեաց աշխարհին։ Իսկ պայլն Թու-
10 մաս երկուցեալ ի նմանէ փախուցեալ գնաց ,Անտիոք և զԹորոսի որդին կալան ամպարիշտ ոմանք և սպանին։ Այս Մլեհ էր այր չարասիրտ յոյժ և բաղում աղտեղի գործաւք լցեալ, վասն որոյ սպանաւ ի զաւրաց իւրոց ի մէջ քաղաքին Սիսոյ[21]։ Այլ Ստեփանէի Ցնացեալ էին Բ (2) որդիք՝ Ռովբէն և Լևոն, որք
15 սնեալ կային առ քեռին իւրեանց Բակուրան, տէրն Պապեռաւնին։ Եւ յորժամ սպանաւ Մլեհն իշխանքն և զաւրքն Հայոց յղեցեալ բերին անտի զՌովբէն որդի Ստեփանէի և կացուցին պարոն Հայոց։

Է. Եւ տիրեաց աշխարհին Կիլիկիոյ Ռովբէն որդի Ստեփանէի, այր բարեբարոյ և իմաստուն և առատ յոյժ։ Սա էառ իւր
20 կին յազգէն Ֆռանդաց զՋապէլ, դուստր Հանֆրէ տ՝ Դուրունին[22] և ծնան նմա դստերս երկուս՝ Ալիծ և Ֆիլիպ[23]։ Իսկ ի հասանել վախճանին Ռովբինայ[24], կացոյց յաթոռն զեղբայր իւր զԼևոն, յանձնարարեալ նմա զերկոսին դստերսն իւր և ինքն վախճանեալ թաղեցաւ ի Թրազարկն։

25 Ա/Ը. Յետ մահուան Ռովբէնի տիրեաց աշխարհին Կիլիկիոյ 170 բ
Լևոն եղբայր իւր, որ Ը (8)-երորդ իշխող էր յազգէն Ռովբինանց և եղև առաջին թագաւոր Հայոց ի Կիլիկիայ, որ և քաջութեամբ և իմաստութեամբ տիրեաց հայրենի աշխարհին և այլ բազում գաւառաց և աշխարհին Իսավրիոյ. շինեաց և բազում դղեակս և ամ-
30 բոցս ի պէտս պահպանութեան աշխարհին իւրոյ։ Արար և պատերազմունս մեծամեծս, որպէս գտանի ի լիապատում գիրս պատմութեան նորա[25]։ Իսկ զերկոսին դստերսն Ռովբէնի եղբաւր իւրոյ կարգեաց այսպէս՝ զԱլիծն ետ յամուսնութիւն Ռեմունտ բրընձին Անտիոքայ[26], յորմէ ծնաւ որդի մի Ռովբէն անուն, զոր
35 կոչէին բրինձ Ռովբէն։ Այս բրինձ Ռովբէն առ իւր կին զՀելուիզ դուստր Հեմրի թագաւորին Կիպրոսի. և ծնան նմա դստերս երկուս՝ Էսչիւ և Մարիա։ Էսչիւն մեռաւ առանց կարդելոյ և Մարիայն եղև կին Ֆիլիպ տ՝ Մընֆաւրդին, որ տիրէր Սրոյ։ Եւ միւս դուստրն Ռովբինի Ֆիլիպն եղև կին թագաւորին Ցունաց
40 Լաշքարէ[27], և ծնաւ որդի մի Կոստանդին անուն, այլ ոչ ժամանեալ ի մեծութիւն վախճանեցաւ փոքր։ Եվ յետ ամաց ինչ տիրելոյ Լևոնի աշխարհին Կիլիկիոյ առաքեցաւ նմա յընդրուրէն

---

2 խնդրեաց, զօրս։ 4 օգնականութեամբ անօրինացն։ 7 զօրքն անօրինանց, զօրսն։ 11 անբարիշաք։ 12 դործօք։ 13 զօրաց։ 14 Սաեփանէի։ 16 զօրքն։ 17 Սաեփանէի։ 18 Սաեփանէի. 20 ֆրանկաց։ 25 մահուանն։ 26 եղբօր։ 34 բրնձին, Ռովբինի։ 37 Ցնաց փխ. մեռաւ։ 38 Մընֆօրդին։ 39 Ռովբենի։

Ալամանաց և ի կայսերն Յունաց թագս թագաւորութեան. և նա
ընկալեալ աւծաւ ի մայրաքաղաքն Տարսուս թագաւոր ազգիս Հա-
յոց, որ եղև առաջին թագաւոր յաշխարհն Կիլիկիոյ։ Եւ էառ իւր
կին զՍպիլ դուստր Հեմրի թագաւորին Կիպրոսի[38]. և ծնաւ դուստր
5 մի Զապէլ անուն։ Եւ յետ ամաց ինչ վախճանեցաւ թագաւորն
Լևոն բարիոք խոստուանութեամբ և թաղեցաւ ի քաղաքն Սիս և
մասն ինչ ի նմանէ թաղեցաւ ի վանքն Ակներ, զոր ինքն էր
շինեալ։ Իսկ յետ մահուան թագաւորին Լևոնի եկաց պայլ աշ-
խարհին Ատան, տէրն Մանիաւնին, որ յետ աւուրց ինչ սպանաւ
10 ի Հաշիշեցն ի քաղաքն Սիս։ Եւ եղև պայլ Կոստանդին գուն-
գուստապլն, || որ էր քեռորդի թագաւորին Լևոնի և տէր Բարձր- 171 ա
բերդոյ և Պապեռաւնին։ Իսկ յաւուրս սորա բրինձ Ռովբէնն ել-
եալ յԱնտիոքայ գնաց ի Կուռիկաւս և տարեալ ընդ իւր զմայրն
իւր ետ ի կնութիւն Վահրամ մարաջախտուն և նա ամուսնացաւ
15 ընդ նա։ Եւ զաւրինաւք ամուսինն իւր վարեալ առաքեաց առ
եղբայր նորա Լևոն տէր Բերդկանն և Մաւխրստին։ Իսկ բրինձ
Ռովբէնն և Վահրամ մարաջախտն եկեալ ի Տարսուս առեալ ընդ
իւրեանս զիշխանսն, որ անդ կային՝ զՄաւլևոնցիք, և զԱպլհա-
նանք և զայլսն. և եկեալ նոքաւք տիրեցին Ատանոյ. և անտի
20 ելեալ երթային ի Մսիս, վստահացեալ ի զաւրս իւրեանց համա-
րէին տիրել ամենայն աշխարհին և արտաքս ընկենուլ զՋապէլ
դուստր թագաւորին Լևոնի ի սեպհական աթոռոյ հաւրն նորա,
այլ Աստուած ոչ ետ թոյլ կատարել զչարութիւն կամաց իւրեանց,
հանդէպ ելեալ նոցա պայլն Հայոց Կոստանդին սակաւ զաւրաւք,
25 և պատերազմեցաւ ընդ նոսա մերձ ի Մսիս, և շնորհաւքն Աս-
տուծոյ յաղթեաց նոցա[39]։ Իսկ բրինձ Ռովբէնն և այլ իշխանքն
փախուցեալ գնացին ի Տարսուս և անտ ամրացան։ Եւ պայլն
զհետ եկեալ զաւրաւք պաշարեաց զնոսա. և յետ բազում աւուրց
էառ զքաղաքն Տարսուս, և կալաւ զբրինձ Ռովբէնն և զիշխանս
30 նոցա և եդին ի բանտի, որ և անտ վախճանեցան։ Եւ անտի
գնացեալ ի Կուռիկաւս առին զնա և զայլ ապըստամբեալ ամ-
բոցսն շուրջանակի։ Իսկ յետ այս ինչ գործելոց խորհուրդ արա-
բեալ իշխանքն Հայոց ամուսնացուցին զՋապէլ, դուստրն թա-
գաւորին Լևոնի, ընդ Փիլիպ, որդի Կոյր բրընձին։

35 [Բ]/Թ. Եւ Փիլիպն աւծաւ թագաւոր երկրորդ ի քաղաքն Տար-
սուս և ամենեքեան մտերմութեամբ ծառայէին նմա։ Իսկ նա
խորհուրդ չար եդեալ ի մտի իւրում, հրամանաւ հաւրն իւրոյ և
թելադրութեամբ ամենայն անտիոքացեաց և դամփլցեց, զի զե-
կեղեցիսն Հայոց և || զիշխանսն զամենեսին ի սպառ ջնջեսցեն, 171 բ
40 և Ֆռանկք կացուսցեն ի տեղի նոցա, զոր լուեալ ոչ կարացին
տանել այնպիսի ամպարշտութեանն, այլ յաւուր միում մինչ
կային ի Թիլն բերդ, Ճաւֆրի, տէրն Սարվանդիքարին և պռաւ-
քսիմոսն Տրդատ կալան զնա և անտի տարեալ եդին ի բանտի

---

1 Ալամանաց։ 2 օծաւ։ 6 ի չիմ։ 12 սրա։ 15 զօրինօք։ 19 նոքօք։ 20 զօրս։ 22 հօրն։ 24 զօրօք։ 25 շնորհօքն։ 28 զօրօք։ 31 ապստամբեալ։ 33 դուսար։ 35 օծաւ։ 37 հօրն։ 41 ամբարշտութեանն։

յանաոիկն Բարձրբերդ և անդ վախճանեցաւ[10]. Իսկ յետ այս ինչ գործելոց ամուսնացուցին զթագուհին Զապէլ ընդ Հեթում, որդի Կոստանդեայ պայլուն Հայոց, և աւծին զնա թագաւոր մեծաւ խնդութեամբ ի մայրաքաղաքն Տարսուս։

5 Գ/Ժ. Եկաց երրորդ թագաւոր Հայոց ամենագովելին Հեթում, որ առաւելեաց բարութեամբ քան զամենայն թագաւորս. և ետ նմա Սատուած կրկին շնորհս նորոգելոյ և աճեցուցանելոյ զթագաւորութիւնս Հայոց։ Եւ ծնան նմա որդիս երիս՝ Լևոն, Թորոս, Ռովբէն, և դստերս Ե (5) Սպիլ, Ֆիմի, Ռիթա, Զապէլ, Մարիայ։

10 Սորա փոքր որդին Ռովբէն վախճանեցաւ մատաղ ախաւք և Թորոսն սպանաւ ի դաւրացն Մսրա ի կապանն Մառոյ[11], յորում աւուր և զանդրանիկ եղբայր նորա Լևոն կալանաւոր արեալ տարան ի Մսր, զոր յետ երկուց ամաց դնեաց զնա[12] հայր նորա ի ծառայութենէն Մսրայ՝ և ետ դին սուլտանին զբերդն Դարպսակ

15 և զՍնղուր Աշխարն[13], որ էր խուշտաշ սուլտանին և կայր ընդ ծառայութեամբ Թաթրուն, զոր խան Ապաղայն շնորհեաց զնա թագաւորին Հեթմոյ, վասն թափման որդոյ նորա։ Իսկ Սպիլ դուստր սորա եղև կին Պեմունտ բրընձին Անտիոքայ և գունթին Տրապաւլսոյ. Ֆիմին եղև կին Ճուլիան Սայիտոյ տիրոջն. Ռի-

20 թայն եղև կին Կոստանդին Սարվանտիքարին տիրոջն. Զապէլն մեռաւ անկարգ. և Մարիայն եղև կին Կի տը Պլնին։ Եւ ի հասանել վախճանի թագաւորին Հեթմոյ առ եղբ Պար || ատիս գե- 172 ա
տոյ, որ կոչի Ակներ. նախ կրաւնաւորեցաւ և կոչեցաւ անուն նորա Մակար և ապա հանգեաւ[14] և թաղեցաւ ի Թրազարկն։ Յետ

25 որոյ եկաց յաթոռ նորա անդրանիկ որդին նորա Լևոն։

Դ/ԺԱ. Լևոն որդի Հեթմոյ եկաց չորրորդ թագաւոր Հայոց և աւծաւ ի քաղաքն Տարսուս յաւուր Յայտնութեան տեառն[15]։ Սա էառ կին զԿեռան՝ դուստր Հեթմոյ, տեառն Լամբրունին. և ծնան նմա որդիք Է (7)՝ Հեթում, Թորոս, Սմբատ, Կոստանդին, Ներ-

30 սէս, Աւշին, Ռովբէն, և դստերս Գ (3)՝ Զապէլ, Ռիթա, Թեֆանոյ[16]։ Սա վախճանեցաւ ի քաղաքն Սիս և թաղեցաւ ի Թրազարկն[17]։ Յետ որոյ տիրեաց աշխարհին Կիլիկիոյ անդրանիկ որդին նորա Հեթում։ Եւ Թորոս եղբայր սորա էառ կին զՄարկրիա՝ դուստր Ոյկտ Լըզինայ, թագաւորին Կիպրոսի. և ծնաւ նմա որդի

35 մի Լևոն անուն։ Իսկ առաջին քոյր սոցա Զապէլ եղև կին Ամառի, Սրոյ տիրոջն և որդոյ թագաւորին Կիպրոսի, վերոյասացել Ոյկտ Լըզինին։

ԳԼԽ

ԶԳԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՎ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ ԿԻՊՐՈՍԻ[18]

40 Սուրբ քաղաքն Երուսաղէմ թափուեցաւ յանաւրինաց և եղև քրիստոնէից յաւուր ուրբաթի, յուլիս ամսոյ ԺԵ (15)

---

3 օծին։ 10 տիօք։ 11 զօրացն։ 12 արարեալ։ 13 Մսրր։ 15 զՍնղուրաշխարհն։ 19 Տրապզլսոյ։ 19—20-րդ առոր՝ Ռիթայն...տիրոջն չիք։ 23 կրօնաւորեցաւ։ 27 օծաւ։ 29 Ներսես։ 30 Թեոդանոյ։ 32 որդի։

աւրն ի թուականին Քրիստոսի ՌՂԹ (1099)[39], Եւ ընտրեցին քրիստոնէքն թագաւոր Երուսաղէմի զԳաւնդաւֆրէ տը Պոյլուէնն, որ էր տուկ գաւառին, որ կոչէր Լաւռայն. այլ սա ոչ կամեցաւ թագ շալկել և մեռաւ անժառանգ[40]։

Ա. Յետ մահուան Գաւնդաւֆրէ տը Պոյլուէնին պսակեցաւ առաջին թագաւոր Երուսաղէմի Պաղտինն[41] իր աղբայրն և սա մեռաւ անժառանգ։ 172 բ.

Բ. Եկաց երկրորդ թագաւոր Երուսաղէմի Պաղտին տը Պուրգն[42] կարևոր սոցաւ։ Սա էառ կին հայ իշխանի մի, որում անուն էր պարոն Գարրիէլ, որ տիրէր Մէլիտինոյ. և անուն կնոջն Մաւրֆիա. և եղեն նորա դստերք Դ (4), որ են անուանք նոցա՝ Մէլիսանթ, Ալիծ, Հաւտիարտ, Ճաւիէ։ Մէլիսանթն եղև կին Ֆուքին, որ էր գունդ Անճուին[43]. Ալիծն եղև կին ըրընձին Անտիոքայ[44]. Հաւտիարտն եղև կին գունդին Տրապաւլսոյ[45]. Ճաւիէն եղև հաւատվոր և վասն իւր շինեցաւ վանքն, որ կոչի սուրբ Լազար Բեթանիոյ։

Գ. Յետ մահուան թագաւորին Պաղտնի եկաց երրորդ թագաւոր Երուսաղէմի Ֆուքն իւր փեսայն, որ ամուսնացեալ էր ընդ Մէլիսանթ դուստր նորա, և եղեն նոցա Բ (2) որդիք՝ Պաղտին և Ամաուի[46]։ Այս թագաւոր Ֆուքս ի դոյրն Աքայոյ կու վարէր լապըստակ մի և ձին զոլաւմ անցաւ և եսպան զինք[47]։

Դ. Եկաց չորրորդ թագաւոր Երուսաղէմի Պաղտին որդի Ֆուքին և եղբայր նորա Ամաուին եղև գունդ Ճաֆուն։ Այս Պաղտին թագաւորս յզրկեց ի Կոստանդինուպաւլիս վանց կին առնելոյ և ետուն նմա կին զԹաւտաւռն ի յազգէ Մանուիլ կայսերն և չեղև նոցա ժառանգ, յետ որո մեռաւ թագաւորն Պաղտին[48]։

Ե. Եկաց Ե(5)-երորդ թագաւոր Երուսաղէմի Ամաուի[49] եղբայր Պաղտնին, բայց զսա ոչ կամեցաւ թագել պատրիարգն Երուսաղէմի, մինչև բաժնեցաւ ի յիր ամուսնոյն, որ էր դուստր Ճաւսլնին Ուռհայոյ գունդին, վասն ազգակցութեանն, որ ի մէջ նոցա. բայց յառաջ ծնեալ էր ի նոցանէ որդի մի, որում անուն էր Պաղտին և դուստր մի, որում անուն էր Սպիլ։ Այս թագաւոր Ամաուի յետ բաժանելոյ ի կնոջէն իւրմէ Աննիզէ էառ իւր կին զՄարիայ, ազգականն Մանուիլ կայսեր. և եղև նոցա դուստր մի || Զապէլ անուն։ 173 ա.

Զ. Յետ մահուան թագաւորին Ամաուէ[50] եկաց Զ(6)-երորդ թագաւոր Երուսաղէմի Պաղտինն, որ դոյդի եղև. և Սպիլ, քոյր սորա. եղև կին մարգիզ տ Մունֆէռանթին։ Եւ եղև նոցա որդի մի Պաղտին անուն, որ եղև տղայ թագաւորն։ Յետ մահուան մարգիզին իւր կինն Սպիլն ամուսնացաւ ընդ Կի տ Լըզինայն[51]։ Եւ Զապէլ դուստրն թագաւորին Ամաուէ ծնեալն ի Մարիամայ թագուհոյն ամուսնացաւ ընդ Հանֆրէ տը Դուրուէնն։

Է. Յետ մահուան Պաղտին Գաւդոյն եկաց Է(7)-երրորդ թագաւոր Երուսաղէմի Պաղտին[52], որդի մարգիզին, ծնեալն ի Սպիլէն, որ էր քոյր թագաւորին Պաղտնի. և սա մեռաւ վոքր։

Ը. Եկաց Ը(8)-երրորդ թագաւոր Երուսաղէմի Կի տ Լըզինայն

այրն վերոյասացեալ Սպլին։ Յաւուրս սորա եղև կորուստն Երու-
սաղէմի և փրկչական խաչին[53]. և յետոյ ի սղարն Աքայոյ[54]։ Մե-
ռաւ Ապիլ՝Թագուհին Երուսաղէմի։ Եւ եղև Թագուհի Զապէլ, քոյրն
իւր, դուստր Մարիայ Թագուհոյն, որ էր կին Հանֆրէ տը Դու-
5 ռունին, և պսակվեցաւ ընդ Ռուռաթ մարգիզ տ Մունֆոանթն. և
եղև նոցա դուստր մի Մարիայ անուն. Զայս մարգիզ Ռուռաթս
Հաշիշիքն սպանին. և կին նորա Զապէլ Թագուհին պսակվեցաւ
ընդ գունդ Հէռի տ Զայնրայնն և ծնաւ ի նմանէ Բ (2) դուստր՝
զԱլիծն և զՖիլիպն։ Ալիծն եղև կին Թագաւորին Կիպրոսի Կի տ
10 Լըզինին և Ֆիլիպն եղև կին Էրադ տը Պրէնին։ Գունդը Հեռին
ընկաւ ի պատուհանն ի վայր ի բերդն Աքայոյ և մեռաւ[55]։ Եւ Զա-
պէլ Թագուհին իւր կինն պսակվեցաւ ընդ Հեմրի Թագաւորն
Կիպրոսի և ծնաւ ի նմանէ դուստր Բ (2)՝ զՍպիլն և զՄելիսանթն։
Սպիլն եղև կին Թագաւորին Հայոց Լևոնի[56] և Մելիսանթն եղև
15 կին Կոյր բրընձին[57]։ Եւ յետ մահուան Զապէլ Թագուհոյն ամուս-
նացուցին զՄարիայ, դուստր նորա, որ ծնեալ էր ի մարգիզէն,
ընդ Ճուան տը Պրայնն. և այս եղև ըռէ Ճուանն || Աքայու։ Սոցա 173 բ
եղև դուստր մի Զապէլ անուն, որ եղև կին ընբրուր Ֆրտրկին[58],
յորմէ ծնաւ որդի մի Ռուռաթ անուն և այս եղև ըռէ Ռուռաթն[59]
20 հայր Ռուռատնին։

ԹԱԳԱՒՈՐՔ ԿԻՊՐՈՍԻ[60]

Ա. Երկու ձիաւոր եկին ծովուն ի յայնդիհէն, որ էին եղ-
բարք Ճաւֆրէ տ Լըզինին, որ էր գունդ տ Լամարջ. անուն
միոյն Կի և միւսոյն՝ Հեմրի։ Կի եղև Թագաւոր Երուսաղէմի ընդ
25 իւր կնոջն ղեհաց Սպիլին, որպէս ի վերոյ յիշեցաք։ Յորժամ
Ըռիջարդ Թագաւորն Ընկլիզաց էառ զԿիպրոս ի Յունաց. նա՝
այս Կի Թագաւորս գնեց զկղզին ի նմանէ և եղև Թագաւոր Կիպ-
րոսի[61]։ Սա մեռաւ անժառանգ։

Բ. Յետ մահուան Կի Թագաւորին Կիպրոսի եկաց երկրորդ Թա-
30 գաւոր Կիպրոսի Հեմրի իւր աղբայրն և էառ կին զԸսչիւ, դուստր
Պազտին տը Պլնին, որ էր տէր Ռոամլէու. և ծնաւ նորա որդի մի
Ոյկ անուն և դուստր Բ (2), անուն միոյն Պուրկոյն և միւսոյն՝
Հէլուիզ։ Եւ յետոյ պսակուեցաւ ընդ Զապէլ Թագուհին, և ծնաւ ի
նմանէ դուստր Բ (2)՝ զՍպիլն և զՄելիսանթն։ Պուրկոյնն եղև
35 կին Կախթեր տ Մունտէլիարտին, և եղև նոցա դուստր մի Ըսչիւ,
որ եղև կին Պալիան տը Պլնին՝ Պերութայ տէրոջն։ Հէլուիզն եղև
կին բրինձ Ռովբինայ[62], Սպիլն եղև կին Լևոն Թագաւորին Հա-
յոց[63], Մելիսանթն եղև կին Կոյր բրընձին[64]։

Գ. Յետ մահուան Թագաւորին Հեմրի եկաց երրորդ Թագա-
40 ւոր Կիպրոսի իւր որդին Ոյկն։ Սա էառ կին զԱլիծ դուստր գունդը
Հեռի տը Զայնրայնին, որ ծնեալ էր ի Զապէլ Թագուհոյն. և
եղև նորա որդի մի Հեռի անուն և դուստր Բ (2), անուն միոյն
Մարիայ և միւսոյն՝ Զապէլ։ Մարիայն եղև կին Կախթեր գունդ

տը Պրէնին. և ծնաւ ի նմանէ Գ (3) որդի՝ զՃուանն և զՈյկն և
զՀէմրի։ Ճուանն և || Հէմրին մեռան և Ոյկն եղև գունդ տը Պրայն 174 ա
և էառ կին Հզապէլ դուստր տուկին Աթենացոց. և ծնաւ նմա
որդի մի Կախթեր անուն և դուստր մի Աննէղ։ Զապէլ, միւս
5 դուստրն ըռէ Ոյկին, եղև կին Հեռէ Կոյր ըրընձին որդոյն. և
ծնաւ որդի մի Ոյկ անուն և դուստր մի Մարկրիտ, որ եղև կին
Ճուան տ Մունֆաւրթ Սրոյ տիրոջն։

Դ. Հեռի եղև չորրորդ թագաւոր Կիպրոսի և էառ կին զդուստր
մարգիզ տ Մունֆռանթին և ոչ ծնաւ ի նմանէ ժառանգ. և յետ
10 մահուան կնոջն պսակվեցաւ ընդ Թէֆանոյ դուստր պարոն Կոս-
տանդին պայլոյն Հայոց[65], որ էր աւագ պարոնն. և սա մեռաւ ան-
ժառանգ, յետ որոյ պսակվեցաւ ընդ Բլայժանս, դուստր ըրընձին
Անտիոքո. և ծնաւ ի նմանէ որդի մի Ոյկ անուն, որ և մեռաւ
ԺԴ (14) ամաց։

15 Ե. Եկաց Ե(5)-երրորդ թագաւոր Կիպրոսի Ոյկն, որդի Հէռէ
Կոյր ըրընձին որդոյն, որ ծնեալ էր ի Զապէլ Հեռի թագաւորին
քաւրոջն։ Սա էառ կին զԶապէլ դուստր Կի տը Պլին գունդուս-
տապլին Կիպրոսի և ծնաւ նոցա որդի Զ (6) և դուստր Դ (4),
անուանք որդոցն՝ Ճուան, Պեմունտ, Հեռի, Ամաուի, Կի և Հէմրի,
20 և անուանք դստերացն՝ Մարիա, Մարկրիտ, Ալիծ և Հէլուիզ։

Զ. Յետ մահուան ըռէ Ոյկին եկաց Զ(6)-երրորդ թագաւոր
Կիպրոսի իւր որդին Ճուանն, կացեալ ամ մի և մեռաւ։

Է. Յետ մահուան Ճուանին եկաց Է(7)-երրորդ թագաւոր
Կիպրոսի եղբայր նորին Հեռի այր անմրգի և խեղանդամաւք, զի
25 Պեմունտն, որ յառաջ ծնեալ էր քան զնա, մեռեալ էր ի կենդա-
նութեան հաւրն իւրում։ Ամաուի եղբայր սորա էառ կին Հզապէլ՝
դուստր թագաւորին Հայոց Լևոնի[66], որոց ծնաւ որդի մի Ոյկ
անուն։ Եւ Կի եղբայր սոցա էառ կին զԸսչիւ տիկինն Պերութա || , 174 բ
որ լեալ էր կին Հանֆրէ տ Մունֆաւրթին. սորա ծնաւ որդի մի
30 Ոյկ անուն։ Մարկրիտ, քոյր սոցա, եղև կին Թորոսի, որդոյ թա-
գաւորին Հայոց Լևոնի[67], և ծնաւ ի նմանէ որդի մի Լևոն անուն։

Դ

ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԲՐԸՆՁՆՈՅՆ ԱՆՏԻՈՔԱ[68]

Ա. Պեմունտն եր[ր]որդի Ռաւպէրտ Կիջարդին և յորժամ
առաւ քաղաքն Անտիոք և ետուն զնա Պեմընտին, նա վասն որ
35 ինք Պեմունտն բրինձ էր Դարանդին, նա ինք և իւր յետնացքն
կոչեցան բրինձ։ Այս առաջին Պեմունտս էառ կին զԿոստանս
դուստր ըռէ տը Ֆրանցին[69]. և ծնաւ նմա որդի մի Պեմունտ
անուն։

Բ. Երկրորդ Պեմունտն էառ կին զԱլիծ դուստր թագաւորին
40 Երուսաղէմի Պաղտնի[70] և ծնաւ դուստր մի Կոստանս անուն, որ
եղև կին Ռեմունտ գունդ տը Բաւդերին որդոյն. և ի նմանէ ծնաւ
որդի մի Պեմունտ անուն և դուստր մի Մարկրիտ, որ եղև կին
Մանուիլ կայսերն Յունաց։

Գ. Պեմունտն[71] Գ[72] էառ կին զԵրինէ, ազգականն Մանուիլ
կայսերն և ծնաւ դուստր մի։ Եւ յորժամ այս բրինձս վարեց
զիւր կինն և զիւր դուստրն ի Յուսմանիայ և էառ իւր կին տի-
կին մի անտաքցի Աւրիիլուզ անուն[72]։ Սա դարձեալ վարեաց զիւր
5 կինն և էառ այլ կին Սոպիլ անուն, և ծնաւ ի նմանէ դուստր մի,
և դարձեալ վարեաց և զայն կինն և էառ այլ կին՝ Զապէլ անուն,
որ այրկտէր էր և հաւատվոր էր, լել ի գոյդեցն ի վանքն. և ի
նմանէ ծնաւ Բ (2) որդի՝ զՊեմունտ և զՌեմունտն, որ եղև սան
գունդին Տրապալլսոյ Ռեմբնտին, զոր ի յետ մահուան գունդ
10 Ռեմբնտին ոչ եթող ժառանգ, այլ ետ զգունդութիւնն Տրապալ-
լսոյ իր սանուն՝ Ռեմբնտին ի պոյման[74]. որ թէ՝ ի գունդ տը Դու-
լուգին ժառանգաւորացն մարդ գայր նա ի յինք տային զՏրա-
պալլսոյ գունդութիւնն։ Այս Ռեմունտս էառ կին զԱլիծ դուստր
Ռովրէն Լէոնցոյն, որպէս || վերոյ յիշեցաք[75]. և Պեմունտ եղբայր 175 ա
15 սորա եղև բրինձ։

Դ. Եղև չորրորդ բրինձ Անտիոքա Պեմունտ Միակնին, որ
եղև գունդ Տրապալլսոյ։ Սա էառ կին զԲլայժանս՝ դուստր Հոյը,
Ճբպլէթայ տիրոջն և ծնան նմա որդիք Դ (4)՝ Ռեմունտ, Պե-
մունտ, Ֆիլիպ, Հեռի և դստերք Բ (2)՝ Աւրկիլուզ և Մարիայ։
20 ՀՌեմունտն սպանին Հաշիշիքն ի Ճբպլէթ. Ֆիլիպն պսակվեցաւ
ընդ Զապէլ թագուհին Հայոց և անդ սպանաւ[76], Հէռին էառ կին
զՀապէլ, դուստր թագաւորին Կիպրոսի՝ ըռէ Ռյկին։

Ե. Եւ Պեմունտն եղև Ե(5)-երրորդ բրինձ Անտիոքա և գունդ
Տրապալլսոյ և էառ կին զԼուսիան դուստր գունդ Բաւլին ի Հոռ-
25 մա. և եղև նմա որդի մի Պեմունտ անուն և դուստր մի Բլայ-
ժանս, որ եղև կին թագաւորին Կիպրոսի։

Զ. Պեմունտն եղև Զ(6)-երրորդ բրինձ և էառ կին զՍպիլ դուստր
թագաւորին Հայոց ՀեթմոՀ[77]. և ծնաւ նորա որդի մի Պեմունտ
անուն և դուստր Գ (3)՝ զՀապէլ, զՄարիայ և զԼուսիան։

30 Է. Պեմունտն եղև Է(7)-երրորդ բրինձ և էառ կին զՄարկրիտ
դուստր Լաւիզ տ Պիամունթին, սա մեռաւ անժառանգ. մեռաւ
և քոյրն իւր Զապէլ և միւս քոյրն Մարիայ եղև կին Միկաւլ տը
Սայնթ-Ումերին և մեռաւ անժառանգ։ Լուսիանն եղև կին Նէր-
ճաւվրդուսէ։ Եւ պարտ է գիտել, որ վերոյասացեալ Կոյր բրինձն
35 յետ մահուան Բլայժանս ամուսնոյն իւրոյ էառ կին զՄելիսանդ
դուստր Հեմրի թագաւորին Կիպրոսի[78]. և ծնաւ ի նմանէ դուստր
Բ (2)՝ գՀելուիզ և զՄարիայ. Հելուիզն մեռաւ և Մարիայն Ռնաց
տամուժէլ։ Այս այն տամուժէլ Մարին է, որ ծախեց ըռէ Ջառ-
լին[79] զԵրուսաղէմայ թագաւորութիւնն։

40 Սոքա կացին բրինձ ի Յանտիոք ըզորդ հայրենէտրութեամբ
ի յառաջի Պեմբնդէն սկսեալ, այլ են և այլք, որ պայլութեամբ
կալան զբրբնձ || ութիւնն Անտիոքա. քանզի Պեմունդն Առաջին 175 բ
յորժամ գնաց յայնկոյս ծովուն և ամուսնացաւ ընդ Կոստանս,
դուստր ըռէ տը Ֆրանսին[80] եդ ի տեղի իւր զՏանկրի քւերոր-
45 գին իւր[81] և ինքն անդէն վախճանեցաւ ի Բոյլն. և Տանկրի կո-
չեցաւ բրինձ և կալաւ զբրբնձութիւնն իբրև ի պայլութիւն մինչև

ի գալ երկրորդ Գեմբնդին, որ էր ըղորդ ժառանգաւոր, այլ Եհաս վախճան Տանկրէ յառաջ քան զգալ ժառանգաւորին ի Թուին Քրիստոսի ՌՃԺԲ (1112)։

Եւ յետ Տանկրէ կալաւ զպայլութիւն ըրընձուբեանն Ռոճէլ որդի Ռոիջարդին, որ էր ազգական Տանկրէի, զոր Տանկրի կացոյց փոխան իւր։ Այս Ռոճէլ յաղթեցաւ ի զաւրացն Հալպայ և սպանաւ մերձ ի Սէրմինն[82] և Ճնաց պայլութիւն ըրընձուբեանն ի ձեռն Պաղտին թագաւորին Երուսաղէմի մինչև ի գալ երկրորդ Գեմբնդին, որ էր ըղորդ ժառանգաւորն։ Սա եկաց ըրինձ մինչև ի վախճան իւր, որ և սպանաւ ի պատերազմն և էկաց Անտաք ի թագվորին պահն մինչև առաքեցին յայնկոյս ծովուն և բերին զգունդ տը Բոյդերին, որդին զՌեմունդն և ամուսնացուցին ընդ երկրորդ Գեմբնդին[83] դուստրն ընդ Կոստանսն, որ ժառանգ էր նմա և եղև բրինձ Ռեմունդն հինդերբորդ, այսինքն՝ Գեմունդ Առաջինն, Տանկրի, Ռոճէլ, Գեմունդ Երկրորդն, Ռեմունդն, այլ երկոքեան սոքա պայլութեամբ կալան զրրընձութիւնն Տանկրի և Ռոճէլն։ Իսկ Ռէմունդն մարիաճով էառ զըղորդ ժառանգաւոր դուստրն երկրորդ Գեմբնդին և եղև բրինձ որպէս վերոյ գրեցաք, այլև սա սպանաւ ի պատերազմն ի Նորբտին, Հալպայ տէրոջն[84] ի ԺԳ (13) ամի իւրոյ ըրընձութեանն. և Ճնաց իւր կինն ըրընձէս Կոստանսն ի ըրընձի տեղ, յորմէ ծնեալ էր Բ (2) որդի և Բ (2) դուստր փոքր։ Եւ յայնմ ամի յորում առաւ Ասխալան յանաւրինաց[85] ամուսնացաւ ըրընձէս Կոստանսն ընդ Ֆրանսէզ իշխան մի, որ չէր առաւել մարդո զաւակ, այլ հաճութեամբ էառ զնա, որում անուն էր Ռոնաղտ տ Ջաստիլուն[86] և եկաց Զ(6)-երրորդ բրինձ Ռոնաղտն մարիաճով եղեալ մինչև եկն ի հասակ ըղորդ ժառանգաւորն Գեմունտ, որդի Ռեմբնդին, որ եղև բրինձ ի կեանս Ռոնաղտ ըրընձին. և Ռոնաղտն էառ այլ ապրանք յԵրուսաղէմայ թագաւորէն և ծառայեաց նմա և աստի ի հետ այլ ոչ ոք կալաւ զպայլութիւն ըրընձութեանն։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնագրում խորագիրը գրված է կարմիր թանաքով։

2. Ռուբինյան առաջին իշխաններին վերաբերող այս տեղեկությունները հմմտ. Մծ, 1, էջ 74։

3. Մանրամասն տես Մ. Ուռհայեցու մոտ (էջ 318—320)։

4. Սմբատի համաձայն Թորոսը մահացել է հայոց 578 թ. (1129), էջ 92, հմմտ. Մծ, 1, էջ 75։ Իսկ Ս. Անեցին բոլորովին այլ թիվ է տալիս՝ 570 թ. (1121), էջ 128։

5. Սմբատը Հոհան Կոմնենոս Միքանածինի Կիլիկիա արշավելը նշում է հայոց 585 թ. (1136), էջ 93, իսկ Մ. Ուռհայեցին՝ մեկ տարի ուշ (էջ 309)։ Հմմտ. Ս. Անեցի, էջ 130, Մծ, 1, էջ 75, Ալիշան, Սիսուան, էջ 240, տես նաև ներքևում, էջ 180։

6. Հմմտ. Վ. Բաբունի, էջ 199։

7. Տես և հմմտ. Վ. Բաբունի, էջ 200, «Պատմութիւն սրբոց հարցն մերոց, որք առ Քրիստոս փոխեցին» աշխատությունը (№ 7620, էջ 418ա)։

8. Հովհան Միքանածինի մահվան հանգամանքները զարմանալի կերպով համընկնում են Վ. Բաբունու պատմածին (էջ 201)։ հմմտ. Կիլիկիայի Պատմիչից Ալիշանի մեջբերած հատվածը («Սիսուան», էջ 240), որոնք բացակայում են Ճաշոցի վերոհիշյալ հիշատակարանում։

9. Իմա խաչակիրները։

10. № 7620 ձեռագրում պահվել է անունը «...դայր ի վերայ նորայ (Թորոսի—Վ. Հ.) Անգրոնիկէ Թագաւորաղն բաղում զօրօք... (էջ 420ա), հմմտ. Սմբատ, էջ 95։

11. Իմա Օշին Լամբրոնացի, հմմտ. Վ. Բաբունի, էջ 206։

12. Ջամչյանը սրանց համարում է հունադավան հայեր («Պատմութիւն հայոց» հա. Գ, էջ 73—74)։ Այս ենթադրությանը հավանաբար հիմք է տվել Վ. Բաբունու հետևյալ վկայությունը.

«Ջնաթանիլեանքըն՝ ժողովեալ,
Որ յԱսկուռաս՝ էին տիրեալ.
Զի հայկազնեայ՝ իշխանքս ելեալ,
Ճարեալեալ՝ առ կայսր եկեալ» (էջ 206)։

13. Ճիշտ ձևը Ասկուռաս (բերդ), Ալիշանը տեղագրում է Պապեռոնի և Լամբրոնի մոտերքում («Սիսուան», էջ 115)։

14. Այս մասին ավելի մանրամասն գրում է Սմբատը. «Պարոն Օշին՝ տէր Լամբրոնին, կտրեց զին անձին իւրոյ ոսկի զեկան քառասուն հազար և ետ զքսան հազարն և կիսոյն գրաւական երետ զտղայ որդին իւր Հեթում առ պարոն Թորոս. և ինքն ազատեալ գնաց ի տուն իւրոյ» (էջ 96). հմմտ. Վ. Բաբունի, էջ 207։

15. Հմմտ. Սմբատ, էջ 90։

16. Թորոսը Տարսոնը գրված պետք է լինի 1152 թվին, նկատի ունենալով հետևյալը՝ նախ Սիսը գրավել է 1151 թվի վերջերին (Սմբատ, էջ 95—96), երկրորդ՝ Հեթում Պատմիչի գրածը, թե Հեթում Լամբրոնացու և Ռիթայի ամուսնությունից «յետ աւուրս ինչ» Թորոսը գրավել է Տարսոնը. իսկ այս ամուսնությունը տեղի է ունեցել 1152 թվին։

17. Սմբատը նշում է հայոց 617 թ. (1168, էջ 100), Ալիշանը՝ 1169 թ. մայիսի 11 («Սիսուան», էջ 551, հմմտ. Մծ, 1 էջ 75), իսկ Ս. Անեցու վկայությունը ստույգ չէ (էջ 136)։

18. Ըստ Սմբատի հայոց 613 թ. (1164, էջ 98), իսկ Ալիշանի՝ 1165 թ. փետրվարի 3 («Սիսուան», էջ 551)։

19. Վ. Բաբունին անունը չի հիշում, իսկ Սմբատը ասում է Ռուբեն (էջ 100)։ Հավանաբար թյուրիմացության մեջ է Սմբատը, եթե նկատի ունենանք, որ հայերը սովորաբար իրենց որդուն կոչում են մահացած հոր անունով, այս դեպքում կլինի՝ Լևոն—Թորոս Լևոն։

20. Խոսքը վերաբերում է Հալեպի աթաբեկ Զենղիի հաջորդներից Նուր-ադ-դին-Մահմուդ բեն Զենղիին (իշխել է 1146—1173/74 թթ., Լեն-Պուլ, էջ 137). հմմտ. № 7620, էջ 420բ և այլն։

21. Մեր պատմիչները միաբերան վատ են հաղորդում Մլեհի մասին (Ս. Անեցի էջ 138, Սմբատ, էջ 102, Վ. Բաբունի, էջ 211)։ Սմբատի համաձայն Մլեհը մահացել է 1175 թվին (էջ 102), սակայն նրա սպանության հանգամանքների մասին հետաքրքիր տեղեկություն է պահվել վերևում նշված անտիպ աշխատության մեջ. «...ի մեռանել Նորբանին (սրա մասին տես վերևում, ծանոթ. 26), որ բարեկամ էր Մլեհին, իշխանքն Նորայ խոր[հ]եցան ըսպանանել զնայ։ ըստ սիրայրսպան բարուց աղղիս և ըմբոնեալ կապեցին զնայ և խնդրէին բանալին և զմատանին զանձուն։ Եւ նայ աղերսէր յիշել զսէր և զաղուհաց, ոչ ըսպանանել։ «Զի այր մեղայոր եմ, թուլ տուք ապաշխարել, հանէք զաչս իմ», որժամ եաես ըսպանանեն, առ զմատանին ի բերանն, իսկ ոմն ներդնի ի դօրաց հռոմոց փողոտեաց զնա, ածել զձեռն ի դենել տեղն հան զմատանին ի կոկորդէն և ըսպանեալ ընդեցին զնա և թաղեցաւ ի վանս իւր ի Մեծ Քարն...» (№ 7620, էջ 424ա)։ Ալիշանը Մեծ Քար վանքը ենթադրաբար տեղադրում է Իբերաուսի արևմտյան կողմերում («Սիսուան», էջ 196)։

22. Իմա Քարաքի տիրոջ, լատին իշխաններից մեկը։ Սմբատն այս ամուսնությունը հիշում է հայոց 630 թվին (էջ 103—104)։

23. Այդ անունը կարծում ենք պետք է սրբագրել Ֆիլիպինե, իրական սեռի համար։

24. Այստեղ բացակայում է Ռուբենի կողմից Լամբրոնի պաշարման և Անտիոքում նրա բանտարկվելու տեղեկությունները. այդ մասին մանրամասն տես Սմբատ, էջ 103—104, № 7620, էջ 424բ—425բ։ Ռուբենի մահն Ալիշանը նշում է 1187 թ. մայիսի 6-ին («Սիսուան», էջ 58, ծանոթ. 4, էջ 552)։

25. Նշանակում է Լևոն Ա թագավորի և նրա գործունեության մասին ժամանակակիցները գրել են մանրամասն պատմություն, որը, դժբախտաբար, մեզ չի հասել։

26. Սմբատի համաձայն Ալիծի (Ալիս) ամուսնությունը Անտիոքի իշխան Ռայմունդ III-ի հետ եղել է երկրորդ անգամ, իսկ առաջին անգամ նա ամուսնացել է հեթում Սասնեցու հետ (էջ 108)։

27. Խոսքը հավանաբար վերաբերում է Նիկեական թագավորության հիմնադիր Թեոդորոս Լասկարիսին (տես Մծ, էջ 93, ծանոթ. 45)։

28. Տես վերևում, էջ 62։

29. Այս տեղեկությունները շատ համառոտ տես նաև Վ. Բաբունի (էջ 217, 210, Մծ, 1, էջ 70)։

30. Շատ համառոտ տես Ս. Անեցի, էջ 149, Սմբատ, էջ 121։

31. Տես վերևում, էջ 73, 90, ծանոթ. 195։

32. Այս տեղեկությունը հաստատում է Սմբատը (էջ 125), ըստ սրի Լևոնը գերությունից ազատվում է 1268 թվին։

33. Պետք է լինի Սոնկուր Աշքար, տես վերևում, էջ 74, 99, ծանոթ. 198։

34. Տես ներքևում, էջ 167, ծանոթ. 148։

35. Սմբատի համաձայն Լևոն Բ-ն թագավոր օծվել է 1271 թ. (էջ 125)։ Հեթում Պատմիչն էլ ավելացնում է «յաւուր Յատնութեան», այսինքն հունվարի 6 ին (տես վերևում, էջ 105)։ Ս. Անեցու շարունակողը նշում է, որ Լևոնը թագավոր օծվելիս 35 տարեկան էր (էջ 152), եթե ճիշտ է այս, նշանակում է Լևոնը ծնվել է 1235 թվին։

36. Տես, և հմմտ. Մծ, 1, էջ 84—85։

37. Տես ներքևում, էջ 148, 169, ծանոթ. 174։

38. Բնագրում խորագիրը գրված է կարմիր թանաքով։

39. Բնագրում ամսաթիվը և օրը ճիշտ է նշված (տես վերևում, էջ 56, 82, ծանոթ. 43), իսկ տարեթիվը՝ ՌՂԲ (1092), սխալ է, ուստի այն ուղղեցինք։

40. Տես, և հմմտ. վերևում, էջ 82, ծանոթ. 43։

41. Իմա Բալդուին I, տես վերևում, էջ 83, ծանոթ. 44։

42. Բալդուին Եդեսացի, որը 1118 թ. ապրիլի 2-ին օծվեց Երուսաղեմի թագավոր Բալդուին II անունով։

43. Բալդուին II-ի ավագ դուստր Մելիզենդն ամուսնացավ Անժուայի դրաֆ Ֆուլկո V-ի հետ։

44. Իմա, Էլիզ, Անտիոքի իշխան Բոհեմունդ II-ի կինը։

45. Իմա, Հոդիերն, Տրապոլսի դրաֆի որդու՝ Ռայմունդի կինը։

46. Տես վերևում, էջ 84, ծանոթ. 63։

47. Տես վերևում, էջ 84, ծանոթ. 69։

48. Տես վերևում, էջ 83, 84, ծանոթ. 78։

49. Իմա, Ամալրիխ, Բալդուին III-ի եղբայրը։

50. Տես վերևում, էջ 59, 84, ծանոթ. 84։

51. Իմա, Գվիդոն Լուզինյան։

52. Իմա, Բալդուին V (փոքր), տես վերևում, էջ 59, 85, ծանոթ. 88։

53. Տես վերևում, էջ 59—60, 85, ծանոթ. 91։

54. Տես վերևում, էջ 60։

55. Տես վերևում, էջ 61, 86, ծանոթ. 107։

56. Իմա, Լևոն Ա թագավոր։

57. Իմա, Բոհեմունդ IV։

58. Իմա, Ֆրիդրիխ II։

59. Իմա, Կոնրադ IV։

60. Բնագրում վերնագիրը գրված է կարմիր թանաքով։

61. Հմմտ. վերևում էջ 60, 85, ծանոթ, 95։

62. Անտիոքի իշխան Ռայմունդ III-ի որդին։

63. Տես ծանոթ. 56։

64. Տես ծանոթ. 57։

65. Սրա մյուս դուստրը՝ Մարիամն ամուսնացած էր Երուսաղեմի Անսիդների հերդինակ հոհան Իպլինի հետ։

66. Լևոն Բ թագավորի այս դուստրը ծնվել է 1273 թ. (Մա, 1, էջ 84), որի ամուսնությունն Ալիշանը նշում է 1293 թվին («Սիսուան», էջ 556)։ Տես վերևում, էջ 195։

67. Լևոն Բ-ի որդիներից մեկը՝ ծնված 1276 թվին (Մա, 1, էջ 84)։ Տես վերևում, էջ 195։

68. Բնագրում վերնագիրը գրված է կարմիր թանաքով։

69. Իմա, Ֆիլիպպ I։

70 Տես վերևում, էջ 106 և ծանոթ. 44։

71. Բնագրում, էջի ձախ լուսանցքում, միևնույն ձեռագրերով ավելացված է. «Երբորդ Գեմբնդին աւել անուն կոչէին կակաղ բրինձ»։

72. Բնագրում «Գ»-ն գրված է տողամեջ, կարմիր թանաքով։

73. Չնայած միտքը լրիվ է, բայց բնագրում «անուն» բառից հետո մոտավորապես մեկ տող քերված է։

74. Իմա, պայման։

75. Տես վերևում, էջ 103, 112, ծանոթ. 28։

76. Նկատի ունի Լևոն Ա թագավորի դուստր Զապելի առաջին ամուսնությունը, տես վերևում, էջ 104։

77. Իմա, Հեթում Ա։ Այդ ամուսնությունը նշում են 1254 թվին («Սիսուան», էջ 554)։

78. Տես վերևում, էջ 107։

79. Իմա, Կարլ I Միջիլիացի։

80. Տես վերևում, էջ 108։

81. Իմա, Անտիոքի իշխան Տանկրեդի քրոջ որդին՝ Ռոջեր Դել-Գրինչիպատո (Գուդլեր, էջ 97)։

82. Այս ճակատամարտը Գուդլերը մատնացույց է անում Բելատում, Հալեպից հյուսիս—արևելք, 1119 թվի հունիսի 27-ին (էջ 100—101)։

83. Իմա Բոհեմունդ II, որի դուստր Կոստանցան ամուսնացավ Ռայմունդի հետ մոտավորապես 1130 թվին (Գուդլեր, էջ 126) և ժառանգեց Անտիոքի իշխանությունը։

84. Ըստ երևույթին այստեղ անճշտություն կա։ Խոսքը վերաբերում է ոչ թե նուբ-

ադ-դին Մահմուդ բեն Զենգիին (1146—1173/74 թթ.), այլ Իմադ-ադ-դին Զենգիին (1127—1146 թթ., Լեն-Պուլ, էջ 137)։

85. Այսինքն 1154 թվին։

86. Իմա՝ Բայնալդ Շատիլոնացի, Բոհեմունդ II-ի դուստր՝ Կոստանցայի երկրորդ ամուսինը, ծագումով աննշան ասպետ։